ԾՆՈՂԱՎԱՐՄԱՆ ՈՃԵՐ

ՆԵՐՈՂԱՄԻՏ ԾՆՈՂՆԵՐ

Ներողամիտ ոճով առաջնորդվող ծնողները ունեն վերահսկողության ցածր մակարդակ և երեխային արձագանքման բարձր մակարդակ: Ներողամիտ ծնողները այդքան էլ չեն հոգում կարգապահության մասին: Նրանք բավականին մեղմ են և կարգապահական միջոցներին են դիմում ծայրահեղ իրավիճակներում:

Առանձնացնելով կարգապահական որոշակի կետեր՝ կարելի է գնահատել ծնողի մոտ ներողամիտ ոճի առկայությունը

- Նմանատիպ ընտանիքներում երեխաները չունեն հստակ ռեժիմ երեխան ինքն է կառավարում իր ժամը
- Երեխաներին չի տրվում իր ժամանակի կառավարման որոշակի կառուցվածք, և երեխան ինքն է ընտրում ինչով զբաղվել
- Հաճախ կաշառում են իրենց երեխաներին
- Խուսափում են սահմանափակումներ դնել երեխայի առջև կամ պատժել երեխային
- Երեխաներից չի ակնկալվում պատասխանատու և հասուն վարքաձև
- Երեխան չունի հստակ պարտականություններ ու պատասխանատվություններ (բնականաբար տարիքին համահունչ), երեխան ունի միայն երեխա լինելու իրավունք՝ անկախ տարիքից:

Նման իրավիճակում երեխաները սովոր չեն պատասխանատվություն կրել սեփական արարքների համար, նրանք չեն կարողանում իրենց առջև որոշակի նպատակներ դնել, չունեն հստակ ձգտումներ:

Նրանք սովորում են ականուն ռեժիմի, չեն կարողանում կառավարել սեփական վարքը: Կարող են ունենալ ագրեսիվ դրսևորումներ, երբ հանդիպում են որոշակի խոչընդոտների:

Այս նյութը ստեղծվել է Եվրոպական միության և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում մանկական և կրթության հոգեբանների հայկական ասոցիացիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության կամ ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները: